ՐԱՖՖԻՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Հայ ազգային-ազատագրական շարժումների և Հայկական հարցի առաջ բերած խնդիրների անշեղ պատասխանների որոնմանն ու լուծմանն իր ամբողջ կյանքը նվիրեց մեծ պատմավիպասան և հրապարակախոս Րաֆֆին: Հայկական հարցի լուծման Րաֆֆու տեսակետը բխում էր նրա այն ընդհանուր ըմբռնումից, թե բռնատիրության ենթակա ազգը միայն բռնության շղթաները ջարդելով կարող է գտնել իր ազատությունը, քանզի «…ազատություն տրվում է այն ազգերին, որոնք իրենց ազատությունը սրով պաշտպանել գիտեն: Առանց արյունի ազատություն չկա, որպես առանց գոհերի փրկություն»[1]:

Իր բազում հոդվածներում, «Ճանապարհորդություն Թիֆլիսից մինչև Ագուլիս» ուղեգրության մեջ, «Ջալալէդդին» վիպակում, վերլուծելով ազատագրական շարժման իրական հանգամանքները և միանգամայն անիմաստ ու անհեռանկար համարելով Հայկական հարցի լուծման եվրոպական դիվանագիտության ուղին, Րաֆֆին առաջադրում էր ազգային ազատագրության պայքարի գաղափարը՝ արևմտահայության գլխավոր խնդիրը համարելով այդ գաղափարի «անդադար և անընդհատ նախապատրաստությունը»: Այդ ծրագրի գեղարվեստական արտահայտությունը հանդիսացան, մասնավորապես, «Խենթը» և «Կայծեր» վեպերը:

1879 թ. պատասխանելով հետադիմականներին, որոնք տիրահաճ քարոզչությամբ էին զբաղված և երկնչում էին ապստամբական ելույթներից, Րաֆֆին հեգնում էր՝ «անշարժության այդ վարպետները, ես համոզված եմ, կցանկանային, որ ամբողջ մարդկությունը մումիաներ լինեն և երբեք չփոխվեին…»[2]:

Պատասխանելով Հայկական հարցի լուծումը զենքով իրականացնելու պահպանողականների հարուցած այն մեղադրանքին, թե դրանով ավելի է վտանգվում ժողովրդի կյանքը և, որ անհրաժեշտ է բարենորոգումների հասնել դիվանագիտական բանակցությունների ճանապարհով, Րաֆֆին գրում էր, որ, ընդհակառակը, միայն բողոքը, ոտնահարված շահերի գիտակցումը և

---

[1] *«Մշակ», 1872, -22:*

[2] *«Մշակ», 1879, -125:*

պայքարը դրանց վերականգնման համար ամեն մի ազգի կենսունակության և քաղաքական հաստնության գրավականն է, որ ամենուրեք կույր նախապաշարմունքը, ստրկական համակերպությունն ու բթացած անշարժությունը խորշանք ու զայրույթ պիտի առաջացնեն միայն: Կարևորելով ազգային կյանքի արմատական վերակառուցման գաղափարը՝ նա պաշտպանում էր այն տեսակետը, որ այդպիսի վերակառուցումը պետք է կատարվի միայն ներքևից, քանզի երբ «ժողովուրդը ինքն է բողոք բարձրացնում, թե գենքով և թե խոսքով… դրան ասում ենք, թե ազատության զգացմունքը արմատիցն է ծագում, ամբոխի սրտիցն է բխում, ցածրից վեր բարձրանում»[3]:

Ուշագրավ է, որ Մ. Նալբանդյանի «բռնության ընդդեմ» տեսակետի հետ համերաշխ Ռաֆֆին մի տեսակ կամուրջ էր հայ հեղափոխական-դեմոկրատի և լիբերալ Գր. Արծրունու միջև: Վերջինս ևս նալբանդյանական ու ռաֆֆիական այն տեսակետն ուներ, թե դարավոր տանջանքներով, ստեղծագործ աշխատանքով բարբարոսության և կամայականության, տգիտության ու ֆանատիզմի դեմ մարտնչած հայ ժողովրդի գոյապայքարի ձևերն ու մեթոդները ոչ միայն չապահովեցին նրա տնտեսական և քաղաքական ազատությունն ու անկախությունը, ոչ միայն չստեղծեցին հետագա զարգացման պայմաններ, այլև հարցականի տակ դրեցին նրա ֆիզիկական գոյությունն անգամ[4]:

Ռաֆֆին դատապարտում էր օտարատիրության լուծը հանդուրժող արևմտահայության տիրահաճ գործիչներին և պահանջում, որ միայն ազգովին կռիվը կարող է բացել ազատության ճանապարհի գոցված դռները: «Հավատարիմ հպատակության մի այնպիսի պետության վերաբերմամբ, որպես Թուրքիան է,– գրել է Ռաֆֆին,– նշանակում է կույր հնազանդություն, այսինքն անտրտունջ տանել բռնակալի բոլոր բարբարոսությունները»[5]:

Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը համարելով անպետք դեղատոմս ապաքինում պահանջող հայոց դարավոր վերքերի համար՝ պատմավիպասանն այն կարծիքին էր, որ արևմտահայերը «նախապատրաստված չէին ժամանակից մեծ օգուտ քաղելու և այդ պատճառով չհասան իրենց նպատակին, թեև ոմանք Բեռլինի վճռի 61-րդ հոդվածի մեջ ոսկու հանք են տեսնում: Այդ հանքը մեզ շատ չէ շլացնում… Մենք մեկ հանք ենք ճանաչում, որից կարելի է ստանալ ցանկացած ոսկին, եթե այդ հանքն անդադար և անընդհատ կերպով կբովագործեր. դա կոչվում է նախապատրաստություն*: Եվ Տաճկաստանի հայոց խնդիրը պետք է կայանա այսուհետև* անդադար և անընդհատ *նախապատ-*

[3] *«Մշակ», 1878, -41:*

[4] *Տե՛ս Գր. Արծրունի. Թուրքահայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894, էջ 26:*

[5] *«Մշակ», 1878, -42:*

բաստության գործի մեջ, որպեսզի նրանք կազմ ու պատրաստ հանդիպեն այն մեծ օրվան, երբ կրկին անգամ կզարկե ազատության ժամը: Իսկ այդ օրը կկրկնվի, և շատ անգամ կկրկնվի… գուցե շատ հեռու չէ մեզանից…»[6]:

Փաստորեն, Ռաֆֆին առաջադրում էր նախապատրաստական մի ծրագիր և Արևմտյան Հայաստանի տարածքները հանձնում հեղափոխական քարոզիչների ուխտագնացությանը, որոնք ժողովրդին ուսուցանում են ազգային մաքառման գիտությունը, սերմանում գաղափարական այն կայծերը, որից ապագայում պիտի բռնկվեին ազգային-ազատագրական հեղափոխության բոցերը: «Կայծերը» Ռաֆֆու գաղափարական կտակն էր հայ երիտասարդությանը, որի վրա նահատակվելու երդում տվեց պայքարող ֆիդայի-հայդուկը: Տասնամյակներ շարունակ «Խենթի» և «Կայծերի» հերոսները (Վարդան, Ասլան, Կարո և ուրիշներ) ընտանեկան ու ընկերական հավաքույթների խոսակցության առարկա էին, և, ինչպես վկայում են ժամանակակիցները, այդ վեպերի ընթերցումների անմիջական ազդեցությամբ կազմվում էին հայդուկային կամավորական խմբեր և մեկնում «Երկիր»՝ զինվորագրվելու արևմտահայության դիմադրական շարժումներին: Չափազանց դիպուկ է բնորոշել գրականագետ Ս. Սարինյանը, թե դյուրին չէ սահման գծել Ռաֆֆու անձնական կենսագրության և գրական-հրապարակախոսական գործունեության միջև, քանի որ գրական գործը եղավ նրա անձնական կյանքի ժամանակագրությունը: Նա դարաշրջանի ռոմանտիկական ուտոպիայից հյուսեց ազգերի համերաշխ գոյությամբ ներդաշնակված ապագա մարդկության իդեալը և այդ հորիզոններում ուրվագծեց վերածնված Հայաստանի գեղեցիկ հեռապատկերը՝ իր երազանքների «Ավետյաց երկիրը»: Ասպարեզ գալով ճիշտ ժամանակին և առաջ անցնելով իր ժամանակից՝ Ռաֆֆին որոշ իմաստով մնաց անհասկանալի թե՛ իր գրականությամբ, թե՛ իր գաղափարներով, և անհասկանալի մնաց ոչ այնքան ժողովրդի համար, որն ուներ նրա պաշտամունքը, որքան ազգի ղեկը հավակնող քաղաքական հոսանքների համար, որ հաճախ պարզունակ ամբոխավարության և արկածախնդրական գործելակերպով խեղաթյուրում էին մեծ գրողի գաղափարական համակարգի ազգային ու համամարդկային բովանդակությունը[7]:

Առաջ քաշելով ըմբոստության նախապատրաստության իր տեսությունը՝ Ռաֆֆին հիմնավորում էր այդ տեսությունը՝ ամեն պահ չէ, որ հարմար է զենքի դիմելու համար, հարկավոր է խստորեն հաշվի առնել ստեղծված կացությունը, ուժերի քանակական և որակական հարաբերակցությունը: Նա այդպի-

---

[6] *«Մշակ», 1879, -26: Տե՛ս նաև Ռ ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու, հ. 11, Երևան, 1991, էջ 304:*

[7] *Տե՛ս Ս. Ս ա ր ի ն յ ա ն. Հայ գրականության երկու դարը, գիրք երկրորդ, Երևան, 1989, էջ 16–17:*

սի հարմար պահ է համարել 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, երբ բալկանյան սլավոնները ռուսական արշավող զորքի աջակցությամբ փշրում էին թուրքական շղթաները: Ռաֆֆին ցավ էր ապրում, որ արևմտահայերը պատերազմը նախապատրաստված չդիմավորեցին: Մեծ գրողն այն համոզմունքն ուներ, որ եթե ժողովրդի կենսունակ ուժերը նախապատրաստված լինեին և երկրում ապստամբական գործողություններ սկսեին, ապա արևմտահայությունը ռուսների օգնությամբ կթոթափեր թուրքական լուծը: Արևմտյան Հայաստանի ազատագրման, Հայկական հարցի լուծման գործում մեծ հույսեր կապելով Ռուսաստանի հետ՝ Ռաֆֆին մի պահ (Բեռլինի կոնգրեսի ժամանակ) «օգնության» որոշ բաժին էր ակնկալում եվրոպական տերություններից: Սակայն նույնիսկ նման քաղաքական մոլորության պահերին, նա ընթացող գործընթացների արդյունքում ըմբռնում էր մեծ տերությունների դիվանագիտության խարդախ էությունը: Ի վերջո, եվրոպական «լուսավոր» կոչված ազգերին համարում էր մեծամեծ վամպիրներ, որոնք խորամանկ քաղաքականությամբ ծծում են «յուրյանց զոհերի արյունը և կողոպտում նրանց»:

Ռաֆֆին մերկացնում էր թուրքական պետականության խարդավանքները, անզիջում հետևողականությամբ բացահայտում պատրանքաշատ այն մտայնությունը, որ փրկության շավիղներ էր որոնում Օսմանյան կայսրությունում: «Այդ ցնորք է,– գրում էր նա,– թուրքը այսօր անկիրթ բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավազակ և այն ժամանակ ավելի վտանգավոր կդառնա… Մենք ունենք պատմություն, 850 տարվա պատմություն, թե ինչպես է մեզ հետ վարվել թուրքը: Նրա ամեն մի տողը արյունով ու արտասուքով է գրված: Ով որ ուրանում է պատմությունը, առաջ ինքն է կնքում իր դատապարտության դատակնիքը»[8]:

Ռաֆֆին չէր հանդուրժում Թուրքիայի բարբարոսությունները ծածկող և նրա երևակայական առաջադիմությունը հռչակող, անձնական հաշիվներով կուրացած այն պատմագրողներին ու հրապարակախոսներին, ովքեր գտնում էին, թե «այժմ Տաճկաստանը բավական բարեկարգված է և քրիստոնյա հպատակների դրությունը այժմ համեմատաբար շատ լավ է, քան թե առաջ, և նրանք համարյա կատարյալ ազատություն են վայելում»[9]:

Եթե Բեռլինի կոնգրեսից առաջ, կոնգրեսի ժամանակ և դրանից անմիջապես հետո հայ դիվանագետների պարզամտությունը ու փորձի պակասը նրանց հաճախ էր դնում քաղաքական նվաստացման հարափոփոխ իրավիճակների մեջ, ապա Ռաֆֆին շարունակում էր ստեղծված կացության խորագիտությամբ հավատ չընծայել եվրոպական դիվանագիտությանը և ապավի-

---

[8] *Ռ ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու, հ. 11, էջ 13–14:*

[9] *Ռ ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1964, էջ 225:*

նելով Ռուսաստանի ազատագրական առաքելությանը, միաժամանակ առաջ էր քաշում Արևմտյան Հայաստանի ազատագրությունը սրով, արյան գնով, զենքի ուժով ձեռք բերելու համարձակ ծրագիրը: Նա մերժում էր բոլոր նրանց, ովքեր կցանկանային Անդրկովկասն անջատված տեսնել Ռուսաստանից: Միաժամանակ քննադատում էր հայ գործիչներին ներկայացված «հայկական սեպարատիվիզմի» մասին ցարական իշխանությունների մեղադրանքը, գտնելով, որ ռուսական վարչակարգին մոլորության մեջ ձգողները եղել են մի քանի բախտախնդիր պաշտոնյաներ, որոնք իրենց իշխանությանը հավերժություն տալու համար սկսել են երևակայական ցնորքներ ստեղծել, թե, իբր, Անդրկովկասում գոյություն ունի մի «Մանուկ Հայաստան», որը կապեր ունի Տաճկաստանի հայոց գաղտնի կազմակերպությունների հետ, և որոնք իբրև թե բոլորը միասին ջանում են ընդհանուր ապստամբություն առաջ բերել Հայաստանում: «Կայծերի» հերոսները համեմատվեցին նարոդովոլականների՝ Ժելյաբովի և Կիբալչիչի հետ, իսկ Ն. Չեռնիշևսկու «Ի՞նչ անել» վեպի հերոսուհի Վերա Պավլովնայի երազի կրկնօրինակ հռչակվեց Ռաֆֆու վեպի հերոս Վարդանի երազը[10]:

Նույնիսկ նման կացության պայմաններում Ռաֆֆի հրապարակախոսը ծաղրում էր բոլոր նրանց, ովքեր գերագնահատում էին եվրոպական դիվանագիտական գործիչների պլատոնական ճառերը, մեծ հույսեր կապում ցավակցության նրանց ցուցադրական արտահայտությունների հետ: «Մենք ուրախանում ենք,– գրել է նա «Դատարկ հույսերով ենք խաբվում» հոդվածում 1878 թվականին,– երբ եվրոպական որևէ լրագիր հայերի մասին ծուռ ու սխալ կերպով մի բան է հայտնել… Մենք մխիթարվում ենք, երբ Եվրոպայի որևիցե քաղաքում, մի ժողովի մեջ Հայկական հարց է բարձրացել: Տեսեք, ասում են մեզ վրա ուշադրություն են դարձնում, մեր բանը պրծած է… Թուրքիայի հայը այսուհետև ազատ է…»[11]: Ռաֆֆին ջանում էր մոլորվածներին համոզել, որ եվրոպական տերությունները գերազանցապես մտահոգված են Մերձավոր ու Միջին Արևելքը բաժանելու և յուրաքանչյուրը շատ ավելի մեծ մասնաբաժին ստանալու և ոչ թե արևմտահայությանը գործնական օգնություն ցույց տալու խնդրով[12]: Համադրելով ու իրար հակադրելով բախվող շահերի էությունը՝ նա կողմնորոշվում է դեպի Ռուսաստան: «Մեր ժամանակից 20–30 տարի առաջ, և կարելի է ասել այն օրից, երբ ռուսները տիրապետեցին Կովկասը, հայ երի-

---

[10] *Տե՛ս Աշ. Հովհաննիսյան. Արծրունու և Ռաֆֆու գաղափարական ներհակության ակունքները.– «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, - 1, էջ 22–23:*

[11] *«Մշակ», 1878, -22:*

[12] *Ս. Զ. Գևորգյան. Հայ ազգային-ազատագրական պայքարի խնդիրները Ռաֆֆու հրապարակախոսությունում, Երևան, 1990, էջ 111:*

տասարդության առջև բացվեցավ մի ընդարձակ ասպարեզ: Նոր տիրապետողներն անծանոթ լինելով երկրին ու տեղային պայմաններին, և որ ավելի կարևոր է իրանցից պատրաստի մարդիկ չունենալով, որ գիտենային զանազան ցեղերի լեզուները, կարոտ էին տեղային գործիչների՝ նոր կառավարության բոլոր հիմնարկությունների մեջ: Հայերի մեջ գտան ընդունակ գործիչներ: Փոքր ի շատե ռուսերեն խոսող երիտասարդը, փոքր ի շատե ռուսերեն գրելկարդալ իմացողը ստացավ տեղ, պաշտոն ու ծառայություն: Դատարանները, պոլիցիաները, գանձատները, պոստերը և մաքսատները լցվեցան հայերով... Այսպես շատերը հարստացան, շատերը բարձր աստիճանի հասան»[13]:

Ռաֆֆու ռուսական կողմնորոշումը հենվում էր տնտեսական ու քաղաքական իրական նախադրյալների և ոչ թե Ռուսաստանի քրիստոնեական պետություն լինելու իրողության վրա: Նա մեծ նշանակություն էր տալիս Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման պատմական իրադարձությանը, քանի որ դրանով Արևելահայաստանի հայությունն ստացավ կյանքի և գույքի ապահովություն, տնտեսական ու մշակույթային զարգացման հնարավորություն: Մեծ գրողը բազմիցս կարևորել է այն ճշմարտությունը, թե «Ռուսաստանի հայերը բնակվելով մի բարեկարգ պետության հովանավորության ներքո, նյութապես ավելի բարենպաստ վիճակի մեջ են գտնվում քան իրենց տաճկահպատակ եղբայրները»[14]: Բնավ զարմանալի չէ, որ «Թուրքահայ հայերի համակրությունը դեպի ռուսները ուներ իր բնական պատճառը, նրանք տեսնում են իրենց ազգակիցներին ռուսական Հայաստանում ավելի բարեբախտ վիճակի մեջ, մինչդեռ իրենք օրստորե մաշվում և ոչնչանում են մի անկարգ և նենգամիտ կառավարության բարբարոսությունից»[15]: Ռաֆֆին արևմտահայությանը կողմնորոշում էր դեպի Ռուսաստան՝ որպես ֆիզիկական բնաջնջումից, տնտեսական և սոցիալական կեղեքումներից փրկության հնարավոր ելք, ամենևին էլ հարցի լուծման նման ձևի մեջ չտեսնելով Հայաստանի անկախության վերականգնման ցանկալի հեռանկարը: Ռաֆֆու աչքից չէին վրիպում ցարիզմի մեծապետական քաղաքականության բացահայտ դրսևորումները: Նրան զարմանք էր պատճառում և ծիծաղելի թվում Հայաստանում հակառուսական ապստամբության նախապատրաստությունների մասին կառավարական շրջաններում տարածված լուրերը: Այս տեսակետից ուշագրավ է 1883 թ. Համբարձում Առաքելյանին գրած նամակի հետևյալ տողերը. «... վերջին ժամանակներում կառավարությունը սկսեց կասկածանքով վերաբերվել դեպի հայ գործիչների ամենահամեստ ցանկությունները, որոնք բովանդա-

---

[13] *Ռ ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու, հ. 11, էջ 227–228:*

[14] *«Մշակ», 1880, -148:*

[15] *«Մշակ», 1880, -167:*

կում էին նրանում միայն, որ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը իրագործվի և տաճկահայերի թշվառ դրությունը փոքրիշատե բարվոքվի»: Ըստ Ռաֆֆու, հավանաբար, «… կառավարությունը ցանկացել է մի կողմից տեղեկանալ, թե մինչև ո՞ր սահմանն է հասնում հայ երիտասարդության «չափազանց» եռանդը, մյուս կողմից, կամեցել է փոքր-ինչ շողոքորթել Թուրքիային, իբր թե խեղդում է ամեն մի վնասակար ձգտում Հայկական հարցի առթիվ, այն հարցի, որ ինքն ստեղծեց Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածով»[16]:

Ռաֆֆու համար աներկբա էր ցարական քաղաքականության փոփոխությունը Հայկական հարցում, բայց այդ փոփոխության մեկնարկին նա տակավին չէր ընդվզում: Սակայն տևական չտևեց հապաղումը: Գրող-հրապարակախոսը տեսնում էր, որ ռուսական մամուլում Թուրքիայի դեմ բացահայտ ելույթները դառնում էին անհնարին, հետադիմությունը ստիպում էր ենթարկվել իր քաղաքական պահանջներին: Եվ 1880-ական թվականների կեսերից, երբ ավելի քան ակնհայտ դարձավ ցարիզմի բացասական դիրքորոշումը դեպի արևմտահայ ազատագրական շարժումը, և Արևելյան Հայաստանում բացահայտ եղավ նրա հալածական քաղաքականությունը դեպի հայ ժողովրդի դպրոցական-եկեղեցական ինքնավարությունն իսկ, պաշտոնական Ռուսաստանի նկատմամբ Ռաֆֆուն կրկին մղեցին 1860-ական թվականների հայ հեղափոխական-դեմոկրատ գործիչների քննադատական խորհրդածությունների ոլորտը: Այս անգամ Ղարաբաղի հայկական մելիքությունների վերացումն էր ցավ պատճառում հայրենասեր գրողին: Ռաֆֆին դժգոհ էր այն բանից, որ չիրականացան ոչ միայն Ղարաբաղի մելիքների ազգային-քաղաքական ակնկալությունները, այլև որ հայերի արտակարգ զոհողությունները ռուսական զենքի հաջողության գործում որևէ արտոնյալ վիճակ չստեղծեցին նրանց համար:

Այս ամենով հանդերձ, Ռաֆֆին չէր բացասում արևելահայության հասարակական զարգացման գործում Ռուսաստանի տիրապետության դրական հետևանքները: Նա գոհ էր, որ ռուսական տիրապետությունը գոցեց հայերի ֆիզիկական ոչնչացման դարերից եկող մշտական երկյուղը և տնտեսական ու մշակույթային նշանակալից առաջընթաց ապահովեց նրանց համար[17]: Եվ դա բնորոշ էր ոչ միայն Ռաֆֆուն, ռուսական տիրապետության դրական կողմն արձանագրող XIX դարի բոլոր հեղինակներն էլ անտես չէին առնում անձի ու գույքի ապահովությունը, մեծարում էին լուսավորությունն ու հայության հա-

---

[16] *Ռ ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1964, էջ 575:*

[17] *Տե՛ս Ն. Բ. Ս ա ր ո ւ խ ա ն յ ա ն. Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ, Երևան, 1971, էջ 152–153:*

մախմբումը, պրոպագանդում և գոյության իրավունքի կռվան պարզում այն, ինչ հնարավոր էր ցարիզմի տիրապետության պայմաններում:

1880-ական թվականներին Ռուսաստանում հետադիմության հաղթանակի պայմաններում հայ հասարակական հոսանքները սկսեցին վերանայել իրենց քաղաքական դիրքորոշումները: Լիբերալները, այդ թվում՝ առաջին հերթին Գր. Արծրունին, հարմարվում են ցարիզմի քաղաքականության նոր ընթացքին: Վարընթաց է ապրում «Մշակ» թերթի խրոխտ խոսքը: Արևելահայ լիբերալիզմը սկսեց առավել քան լռության մատնել, մերժել կամ փոփոխել Մ. Նալբանդյանի քարոզած ազգային հեղափոխության գաղափարախոսությունը: Այլ դիրք գրավեց Ռաֆֆին: Նա չթաքցրեց ցարիզմի հակահայկական քաղաքականության նկատմամբ իր բացասական վերաբերմունքը: Քաղաքական նոր, անբարենպաստ պայմաններում, նա քննադատում էր բոլոր նրանց, ովքեր հանդես էին գալիս սուլթանի դեմ պայքարը դադարեցնելու օգտին, քարոզում էին խաղաղություն, հավատարիմ հպատակություն և սուլթանին սիրաշահելու գործելաձև: Ռաֆֆին ազատագրական պայքարից հրաժարվելու ոխերիմ թշնամին էր: Որպես ազատագրական պայքարի մարտավարություն, նա առաջարկում էր շարժման հիմքում դնել ուժերի համախմբման, ներքին ու միջազգային պայմանների հաշվառման և տևական նախապատրաստության ծրագիրը:

XIX դարի 70–80-ական թվականների հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսը ոչ միայն ազատագրության համար պայքարի գաղափարը դարբնեց ժողովրդի գիտակցության մեջ, այլև գործնականում նախապատրաստեց օսմանյան հանրաբանտի դեմ գրոհող մի սերունդ, որն իր կյանքի գերխնդիրը պիտի տեսներ ժողովրդի ազատության և ռոմանտիկ հայրենիքը իրական հայրենիք դարձնելու մեջ:

Հայկական հարցի լուծման պայքարի ռաֆֆիական ոգին կյանքի կոչեց վրիժառու հայդուկներին, որոնք սեփական հայրենիքում հայրենազուրկ հայի կյանքն ու կայքը պորտաբույծ տիրողներից փրկելու անօրինակ սխրանքներ պիտի գործեին: Հայ ֆիդայական շարժումը սկզբնապես դրսևորվեց որպես հարստահարիչների և նրանց հովանավոր պաշտոնյաների դեմ ուղղված ինքնապաշտպանական պարտիզանական պայքար, իսկ հետո, բնականաբար, դարձավ օսմանյան լուծը թոթափելու ձգտող հայ ազատամարտի տարերային և հախուռն պայքարի հենքը: Տարաբախտաբար, հետագայում աստիճանաբար տիրապետող դարձավ հասարակական այն համոզմունքը, որ հայդուկային շարժումը ազգային-ազատագրական պայքարի գլխավոր ձևն է. մինչդեռ, ըստ Ռաֆֆու, այն պետք է լիներ հատվածական, օժանդակող ձևը: Ռաֆֆին, տևական նախապատրաստությունից հետո, պայքարի և ազատության գլխա-

վոր ձևը համարում էր ժողովրդի համընդհանուր զինված ապստամբությունը, որը պատմական հանգամանքների աննպաստ դասավորության պատճառով հայ իրականության մեջ անհնար եղավ կյանքի կոչել:

РАФФИ И АРМЯНСКИЙ ВОПРОС

НОРАЙР САРУХАНЯН

Резюме

На протяжении всей своей творческой жизни писатель и публицист Раффи пытливо искал решения проблем, связанных с Армянским вопросом и национально-освободительным движением. В своих многочисленных публицистических статьях и путевых заметках, анализируя реальные обстоятельства освободительного движения и признавая абсолютно бесперспективными упования на европейскую дипломатию в разрешении Армянского вопроса, Раффи выдвигал идею национально-освободительной борьбы и считал главной задачей «неустанную и непрерывную подготовку» западных армян к восприятию этой идеи. В условиях, когда на Берлинском конгрессе 1878 г. европейские державы сумели противостоять усилению России и отвергли требования западных армян, он призывал направлять в Западную Армению революционных пропагандистов, которые должны были обучить народ науке национального борения, высечь те идейные искры, из которых должно было возгореться пламя всенародной борьбы.

RAFFI AND THE ARMENIAN QUESTION

NORAYR SARUKHANYAN

Summary

Raffi's opinion on the solution of the Armenian Question derived from the idea that the liberation of the people under tyranny is possible with the destruction of the chains of the tyranny. After analyzing the real grounds of the movement for liberation and finding the way of solution of the Armenian Question adopted by the European diplomacy, after the Berlin Congress, totally empty and without a perspective for success, Raffi proposed the way of the realization of the idea of liberation, based on practical preparation, as it was done by the nations of the Balkan Peninsula.